

Հ. ԳԱՐԱԿԵԶՉԵԱՆ ՀՕՄԻ ԱՌՈՂՅԱՊԱՀԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ

Հասուբրտ Գարակեզօվեան Հօմի Գրամահայ գաղըւթի ամէնակարեւոր իսաստառութիւններէն մէկն է: Հիմնադիրն է ամերիկահայ ծանօթքարեւոր Պ. Միհրան Գարակեզօվեան, որ զան ծննած է իր վաղսմեռիկ զաւկին Հասուբրտի լիշտապելին: Հինգ տարուան գոյրութիւն մը ունի այս տունդրաբոցը, որ նախապէս Պոլսոյ մէջ հաստատուած էր, բայց քաղաքական դէպքերու ինտենսիվ, փոխադրուեցա ֆրանսա, ուր բարերարը նոյն նպատակին համար գնած է դժուակմ դըլակ մը, կոտինիէռ շաթօն, Լուառ-է-Շէռի նախանգին մէջ :

Ներկայի հաստատութեան մէջ կը պատուաբուին 95 սանիք և 20ի չափ արիեստառոր սանիք, դուրս տեղատրուած չափահաս տրոց թիւր կը համնի 15—20ի:

Պատկառելի հիմնադրամ մը կ'ապահովէ արդ հաստատութեան ապագան ամէն տեսակ պատահականութեան դէմ:

Հ. Գարակեզօվեան Հօմի Վարչութիւնը համոզուած որ որբերու իմացական - բարոյական առողջ կրթութեան միակ հիմքը անոնց ֆիզիքական առողջութիւնն է, իր մոտահոգութիւններուն առաջինը և էականը նկատած է Հօմի մէջ ստեղծել առողջապահական լաւագոյն պայմաններ և միանգամայն տղոց ներշնչել մարմնակրթանքի սէրը:

Հօմը, իր գոյութիւնան առաջին շրջանին, զոր բոլորեց Պոլսոյ մէջ, շնորհիւ Տոքթ. Դաւիթեանի բժշկա - մանկավարժական լայն հասկացողութիւնան, տողորուած էր այդ ոսկիով և այսօր Ֆրանսայի մէջ ալ նոյն աւանդութիւնը կը շարունակուի:

Միջավայրը.— Կոտինիէռի ներկայ Հօմը քաղաքէ և նոյն իսկ դիւդէ հեռու, անտառներու մտերմութեան մէջ առանձնացած դղեակ մըն է. օդասան, արեւաշատ և ջրառատ, ահա ինչ որ էականն է: Շէնքին լայն ճակատը դարձած է դէպի հարաւ և բոլոր դասարանները գրեթէ և ննջարանները մեծաւ մասամբ գետեղուած են այդ ճակատին վրայ:

Շէնքը.— Կոտինիէռի գղեակը, արտաքնապէս թէն շքեղ, բայց ներսէն իր սկզբնական շրջանին կը պահէր հին ճարտարապետութիւնն մը հետքերը: Նախկին մէջէմէջ սենեակներու և խուցերուն փոխարէն, այժմ ունինք ընդարձակ դասարաններ: Արակի սկզբնական բաղնիք մը, 18 լրցան - կազմածներով և

Բոլոր յարկերը ջուր ունին. Ջրաբաշխական ինքնավար դրութիւն մը կ'ապահովէ բոլոր ճէմիշներու մշտական մաքրութիւնը: Ամէն յարկի վրայ դրուած լոգարան - սենեակներէն անջատաբար, Հօմը ունի կեդրոնական բաղնիք մը, 18 լրցան - կազմածներով և

ասոր յարակից առօրեայ լուացարանը՝ յատուկ ծորակներով։ Այս բաժանումներուն մէջ ոչինչ խնայուած է մաքրութիւնը՝ ապահովելու ահսակէտով։

Հօմի ներքին մաքրութեան ոչ նուազ կը նպաստէ և այն պարագան որ լուսավառութիւնը ելեկտրական է և շէնքը կեղրոնական ջեռուցում ունի։

Մնունիքը.— Կաթնարուսական է, բարեխսառնուած՝ շաբաթը երկու անգամ տրուող մսեղէնով։ Օրական երեք կանոնաւոր ճաշերէն զատ, տղայոց կը տրուի նախընթրիք։

Փամանակացոյցը.— Տղայոց կեանքին և կենցաղին վրայ շատ լաւ գաղափար մը կուտայ հետեւեալ ժամանակացուցակը որ կը ցուցէ թէ ինչպէս բաժնուած են տղայոց մէկ շաբաթուայ ամբողջ ժամանակը (168 ժամ)։

1.— Քնանալու	միջին իշշուով	62	Ժամ
2.— Խաղ եւ զբոսանք	»	33	»
3.— Դաս եւ սերտողութիւն	»	30.30	»
4.— Ալւանին աշխատանք	»	21	»
5.— Ճաշերու պահեր	»	10.30	»
6.— Աղօթքի պահեր	»	3	»
7.— Զանազան (լոգանք, ելու.)	»	8	»

Զանք թափուած է տղայոց մտաւոր և ֆիզիքական աշխատանքներուն մէջ հաւասարակշուութիւն մը և ներդաշնակութիւն մը պահելու, որպէս զի մէկը միւսին չփասէ կամ տարապայման յոգնութեան տեղի չտայ։ Առաւատները լայն միջոց մը յատկացուած է մարզանքի և առանին աշխատանքներու. մինչև կէսօր կը տեւեն մտային դասերը, յետ միջօրէն յատկացուած է զործօն դասերու (երգ, զծագրութիւն, ձեռարուեստ), խաղերու և բացողեայ աշխատանքներու։

Մարզական կեանքը.— Հօմի առանին աշխատանքներու մեծագոյն մասը՝ մաքրութիւն, խոհանոց, ճաշարան, փայտի սպասարկութիւն, շինարարական գործեր՝ կը կատարուի տղոց ձեռքով։ Այս գործօն կեանքը իր դաստիարակչական օգտակարութեան հետ մարմնակրթանքի յարմարազոյն ձեւ մըն է անշուշտ։ բայց միեւնոյն ժամանակ տղաք ունին իրենց խմբական բացօղեայ խաղերուն ազատ պահերը։ Բոլոր խաղերը հաւասարապէս կը քաջալերուին Հօմին մէջ, ինչպէս ֆութազութ, պատքէդ պօլթ, վոլթ պոլթ, հօքէյը, թէնիսը և աթլէթիսմը։

Բժշկական իսկողութիւն.— Հօմը քանի մը ամիսը անգամ մը այցելութիւնը կ'ընդունի Տօքթ. Թորգոմեանի, որ իրրեւ հաստատութեան բժիշկ, ընդհանուր քննութենէ մը կ'անցընէ աշակեր-

տութիւնը և կուտայ անհրաժեշտ հրահանգները։ Առկէ զատ, վարժարանը մշտական յարաբերութիւններ ունի տեղաբնակ ֆրանսացի բժիշկներուն հետ, որոնցը մէ անմիջական աջակցութիւն կը գտնէ, ի հարկին։

Տարին անգամ մը կը կատարուի նաև աշակերտութեան մարմնաչափութիւնը և կ'արձանագրուին տղոց հասակի, ծանրութեան և շնչառական վանդակի աճումները։ Այս առթիւ կ'արժէ յիշառակել որ Հօմին տղոց ընդհանուր ֆիզիքական աճումը միշտ համապատասխան եղած է քաջառողջ մանուկներու ընական չափերուն։ Օրինակ, վերջին երկու տարիներուն՝ 1924 և 1925 ի ընթացքին, Հօմի 12, 13, 14 և 15 աարեկան տղոց հասակի ընդհանուր աճումը միշին հաշուով եղած է աարեկան 5 աանթիւմները, և ծանրութեան յաւելումը նմանապէս եղած է միշին հաշուով 5 քիլոկրամ (մէկ տարուայ վրայ)։

Եզրակացութիւն։— Իբրև հետեւանք Հօմին մէջ տիրող այդ պայմաններուն, բոլոր սաները առանց բացառութեան կը վայելին կորովի առողջութիւն մը, որ շատ աւելի աչքի կը զարնէ, երբ կը գտնուին տեղույս ֆրանսացի տարեկից տղոց հետ միասին։

Այս չորս հինգ տարիներու ընթացքին, ոչ մէկ ծանր հիւանդութիւն չէ պատահած Հօմին մէջ, բացի ուղեղային մաշկատապի (meningeite) և կողատապի (pneumonie) երկու պարագայէց։ Երկու հիւանդներն ալ շատ շուտով աղեկցած են, առանց ծանր հետեւանքներու։

Իբրեւ համաճարակ որ լուրջ կերպով զրադեցուցած են Հօմին Վարչութիւնը, ունեցած ենք աչքի ցաւը (թրախօմ) և մորթի հիւանդութիւն մը (էքպէմա), զոր աղոցմէ շատերը իրենց հետ բերած են։ Բարեբախտաբար ձեռք առնուած կտրուկ խնամքներու շնորհիւ, այդ հիւանդութիւնները ներկայիս բոլորովին անհետացած են։

Բժշկական ծախքերը Հօմին ընդհանուր պիտոնէին մէջ կը կազմին աննշան չափ մը, հազիւ հազարին ութը։

Վերջացնելու համար, յիշենք նաև որ չափահաս պատանի սաներու բարոյական առողջութեան հարցն ալ նկատի առնուած է։ Մտերմիկ խօսակցութիւններ տեղի ունենալով հանդերձ, առամելապէս կ'աշխատուի պաղ լոգանքներով և ֆիզիքական չարքաշ կեանքով մը պայքարիլ պատանեկական մոլութեանց դէմ։

Կը մնայ բաղձալ որ Հօմին սաները նոյն այդ ողին — առողջութեան և ուժեղ կեանքի պաշտամունքը — տանին իրենց հետ, որովհետեւ մեր ցեղը, վերջին ցնցումներէն վերջ, պէտք ունի մանաւանդ ուժեղ, կորովի և տոկուն տարրերու։